

ՀԱՍՏԷ
M. ARCHAM
Poste Restante
ATHÈNES (Grèce)

ՄԻՈՒԹԻՒՆ

ԲԱԺՆԵԳԻՆ
Տարեկան ֆրանք
Վեցամսեան
Կանխիկ վճարելի

ԱՄՍԱԹԵՐԹ

ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

Դ՝ ՏԱՐԻ

ԱԹԵՆՔ

1899

ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԹԻԻ 37

Գրաշար չունենալու համար «Միութիւն»-ի երկու թիւերն անհրաժեշտ կ'ընեն: Առաջիկայ յունուարէն ըսկտալ անընդհատ պիտի հրատարակուի կանոնադրապէս ամեն ամսու սկիզբը, առ այս մեր յարգելի բաժանորդներն ներդրութիւն հայցելով կը խնդրենք որ իրենց բաժանորդագրութեան պայմանաժամին վրայ երկու ամիս ևս ընկնեն:

ՄԵՐ ԱՌԱՋԱՐԿԸ

ԽԱՌՆ ԺՈՂՈՎ

Աշխարհիս ստեղծագործումէն ի վեր մարդկութիւնն իր մէջ ունեցած է նախանձը, մեծամտութիւնն ու հպարտութիւնը. սա մի անհերքելի ճշմարտութիւն է, որ Աբելի ու Կայէնի օրերէն սկսած է յայտնուիլ մեզ: Մարդկային այս տխուր բարքերը կը կազմեն ընդհանուր և համաճարակ ախտ մը. որով առհասարակ իւրաքանչիւր անհատ վարակուած է քիչ թէ շատ, այնպէս որ ինքնին բնական օրէնք դարձած է, որուն անխուսափելի հետեանքով ամեն ազգ, դարձած է քիչ թէ շատ, այնպէս որ ինքնին բնական օրէնք ամեն ժողովուրդ և ամեն ընտանիք միշտ ունեցեր է իր բաժանումներն ու երկպառակութիւնները: Հակառակ այս իրողութեան եթէ ընդհ. մարդկութիւնը միաբան ըլլար, անուշտ այդ օրինակ թերութեանց ենթակայ չըլլալով, այսօր պիտի ունենայինք տիեզերական միութիւն մը, որով ամենքս ալ մէկ լեզուի, մէկ ազգութեան պիտի պատկանէինք. ո՛չ տարբեր թագաւորութիւններ և ո՛չ ալ ընկերասպան պատերազմներ պիտի ունենայինք. հետեաբար ամենքս ալ երջանիկ պիտի ըլլայինք:

Բնական հանգամանքներու այս պայմաններու մէջ՝ այն ազգերն միայն երջանիկ եղած են, որոնք յաջողած են գոտնել մարդկային թերութեանց հետ վարուելու եղանակներն ու անվտանգ պահել իրենց ինքնուրոյն գոյութիւնը: Ասոնց մէջ երբ ը պատահին ներքին երկպառակութիւններ կամ ո՛ր է արտաքին վտանգ մը, որ իրենց գոյութեան փճացումը կը սպառնայ, իսկոյն մոռնալով անձնական գծուծ հաշիւները, նախանձն ու ատելութեան ոգին, իր սիրաշահեն զիրար կը մօտենան իրարու և ընդհ. ժողով գումարելով վտանգին առաջն առնելու միջոցներուն վրայ կը խորհրդակցին, նկատելով որ վտանգն ոչ թէ անհաւանքու, այլ ընդհանուրին շուրջը կը դառնայ:

Ահա ճիշդ այս գրութեան մէջ կը գտնուինք այժմ, մենք:

* * *

Մենք ալ իբր մարդ՝ բնական օրէնքներու մէջ ի հարէ բացառութիւն չէինք կրնար կազմել, մենք ալ կը կրննք մարդկային այն տխուր բարքերը և մենք ալ ունինք մեր նախնին ու ձեռքը:

Մեր յեղափոխական անցեալ կեանքին մէջ աններելի

թերութիւններ գործեցինք: Չունենալով ո՛չ շրջապայցութիւն ո՛չ լրջախոհութիւն ո՛չ հեռատեսութիւն և ո՛չ ալ գաղափարաւորութիւն, իւրաքանչիւր կուսակցութիւն յախուռն և մասնակի շարժումներով լոկ անուն ստանալու համար իր հաշույն գործեց, փոխանակ միաբանութեամբ ու միահամուռ ուժով դէպի Սուրբ Դատը անկեղծօրէն վերաբերուելու, իւրաքանչիւրն իր նախանձն ու ետ մէջ դրար ժողովրդին մէջ երկպառակութեան սերմեր ցանց ու մեր փոքրիկ ոյժը զանազան անգոյն մասերու բաժնեց. հետեւանք բնականաբար այս պիտի ըլլար, ինչ որ ակներե է: Աշխարհիս մէջ չկայ աշխատութիւն մը, որ իր արդիւնքը չունենայ, քիչ կամ շատ, երբ սկսուած գործին մէջ անկեղծութիւն ու անհաշիւողութիւն ըլլայ, մենք հայերս աշխատեցանք. նիւթական անհամար կորուստներ տուինք. հազարաւոր զոհեր տուինք. ո՛ր է մեր աշխատութեան արդիւնքը, և որո՞նք էին մեր անյաջողութեան պատճառները կը թողունք յարգելի ընթերցողին, որ վերը՝ մեր գծած տողերը ուշադրութեամբ կարդալով պատասխանէ: Մեր անցեալ կեանքին վրայ աւելի երկար զրեւ աւելորդ կը համարինք, քանի որ «Միութիւն»ը չորս տարիներէ ի վեր պատմութեան այդ տխուր էջերը կարդալով զբաղած է: Անցեալը թէ և անմոռանալի է, բայց պահ մը մոռացութեան տալով մտնենք ներկային մէջ:

* * *

Առանց ո՛ր և է կուսակցութեան մը արժանապատուութեան դպչելու, լրջօրէն քննենք մեր այսօրեայ վիճակն ու ճշմարտութիւնը անկեղծօրէն հրապարակաւ խոստովանինք:

Վերջին գէպերէն ի վեր թրքահայերս մեծաւ մասամբ մեր երկրէն վտարուած աստանդական կեանք մը ունինք, աշխարհիս չորս կողմերը սփռուած կը թափառինք, մեր գտնուած միջավայրերուն սովորութեանց ու լեզուներու անտեղեկ ըլլալով զժողովրդութեամբ հազիւ կրնանք մեր առօրեայ հացը ճարել. իսկ անդին մեր դժբաղդ մայրերն ու քոյրերը գետնախորտ, չորաբեկ հացի կարօտ կիսամերկ ու սովալլուկ թողած ենք անխնամ ու անպաշտպան և անոնց բազմաթիւ յանձնած ենք անգութ թշնամոյն սրին ու բրին. կարծես արիւն ու արտաւուր թափելու համար ստեղծուած են խեղճ արարածները:

Արտաւազմանի հայ երիտասարդութեան այն մասը որ փոքրիկ գործ մը ձեռք բերել յաջողած է, այն ալ օտարամոլութեան ախտէն վարակուած շուտով կընտելանայ երկրին սովորութեան և օտարուհի մը հետ ամուսնանալով ի պառկը հեռանայ ազգէն:

Միւս կողմէն ազգ. հոծ գաղթականութեան հետեանքով օր քան զօր ազգին ամուսնութիւններն ու ծննդաբերութիւնները զգալապէս կը նուազի, և այսպէս երթալով մեր թիւը կը պակսի: Միւս կողմէ յեղափ. այն երիտասարդները որոնք թուրքիոյ խոնաւ բանտերուն մէջ ստացան զա-

նազան՝ հիւանդութիւններն՝ արտասահմանի մէջ զիրենք դարձանելու միջոցներէն զուրկ ըլլալով կը մեռնին օտարութեան մէջ:

Սուրբ դատին համար կենդանի նահատակներն այսօր արտարալայերն ու բանտերու խորերը կը հեծեն, առանց նպաստ մը ստանալու իրենց համարին եղբայրներէն:

Մեր հարուստներն ըսես, գրածն զատ ուրիշ ոչինչ չեն ուզեր ճանչնալ, անոնց համար ինչ կաւորութիւն ունի ազգն ու հայրենիքը:

Մեր սրբատեղիներն ու դպրոցները դեռ կը մնան իրենց աւերակ վիճակին մէջ:

Միաբանութիւն ու անկեղծ ազգասիրութիւն չկայ մեր մէջ. ամէն տեղ ուր որ կը գտնուինք անխնայ կը հաւածենք զիրար ու ըստ կանացի սովորութեան ըսի ըսաներով կամ բաստանենք զիրար ու բազմադիմի խլրտումներու տեղի կու տանք: Ըստ ոմանց՝ եթէ կը տեսնուի մեր մէջ բարոյական յառաջդիմութիւն մը արտասահմանի մէջ շատ մը թերթերու երեւումն է: Ասոնք ալ Աստուած հեռի արասցէ, փոխանակ մեր ազգամիտ թերութիւնները չտկել ջանալու իրարու գէժ զինուած շարունակ կը նախատեն ու կը հարուածեն զիրար կարծիս մէջ՝ մէկու հայրը կամ մայրը սպաննած են ու վրէժ կը լուծեն իրարմէ:

* * *

Գալով մեր յեղափոխական կամ պահպանողական կուսակցութիւններուն, որոնց մասին եթէ հարկ ըլլայ մանրամասնօրէն գրել, հատորներ կը կազմեն. մենք կը բաւականանանք հարիւանցի տեսութիւնով մը մեր կարծիքը միայն յայտնել:

Ազգի մը մէջ գանազան կուսակցութիւններու գոյութիւնը յառաջդիմութիւն կը նշանակէ, ինչու որ բարոյական մրցումի պայքար մը կը մղուի, որ ամեն տեսակէտով ազգային շահերուն նպաստաւոր կը լինի, բայց միայն այն ազգերուն համար. որոնք իրենց ազատ դրօշն ունին և կառավարական անկախ վարչութիւնը. իսկ մեզ՝ հայերու համար որ դեռ գերութեան շղթային տակ ընկնուած ու կաշկանդուած ենք, սարսափելի տղետաբեր ու փնտցուցիչ է: Մենք ափ մը ժողովուրդ՝ որքան մարդ ենք այնչափ տարբեր գաղափարներու կը ծառայենք: Մեզմէ ոմանք կը հաւատան թէ՛ ըստ առաջնոյն եթէ սուլթանին քղանցները համբուրենք ու մեղայի գանք, ազգը պիտի վերկուի, ըստ ոմանց պէտք է առ այժմ հանդարտ մնալ մինչև որ ժողովուրդը զարգանայ ու պատրաստուի. ըստ ոմանց՝ պէտք է եւրոպական քաղաքականութեան քայլերուն հետեւիլ և սպասել որ անոնք մեզ ազատեն: Մենք կը խոստովանինք թէ «տիրացուի» տիրողսը կրելու իսկ արժէք չունինք, կը թողունք մեր գրագէտ, քաղաքագէտ և պատմագէտ յարգելի պարոններուն որ համոզեն մեզ թէ՛ ո՞ր ազատագրուած ազգն է, որ երբ ապստամբութեան դրօշ ծածաննց կատարելապէս զարգացած ու պատրաստուած էր: Յունաստանը՝ որ մինչև այսօր մայրաքաղաքէն կէս ժամ հեռու բնակող գիւղացիները դեռ ալպաներէն կը խօսին, թէ՛ կէս-վայրենի պուլկարները, որոնց մեծ մասը մինչև Ռուսո-թուրք պատերազմի ժամանակները դեռ արապաճիներ էին: Մինչև ցարդ ազատագրուած ազգերուն որոնք մէջ տեսնուած է այս ներքին վէճերն ու աննպատակ կռիւները, առանց համեմալի գործունէութեան ո՞ր ազգն ազատուած է. առէ՛ք Յունաստանի ապստամբութեան պատմութիւնը, Թուրքիոյ ծայրէ ծայր և վերջը մեզի ալ հասկցուցէ: Ինչ իրաւամբ մեր յոյսը կը դնենք եւրոպայի քաղաքականութեան վրայ. չէ՞ ո՞ր մետաղապաշտութեան դարուն մէջ կ'ապրինք. այնպէս որ եղբայր մը իր եղբորմէն առանց շահ մը սպասելու օգնութիւն չընենք:

Ինչո՞ւ մեր յոյսը մեր վրայ չենք դնել:

Եւրոպա այժմ զբաղուած է իր աշխարհակալութեան ծրագրի գործադրութեամբ. ինչ փոյթ անոր, որ անդին Ասիոյ խորերը անպաշտպան ժողովուրդ մը կը տանջուի ու գառան պէս կը մորթուի:

Եւրոպա յանուն մարդասիրութեան այն ատեն միայն օգնութիւն կ'ընէ մեզ, երբ տեսնէ մեր լուրջ դրօշ ու նէ ու թիւնը քաջութիւնն և անկեղծ ազատասիրութիւնը:

Եթէ ըլլայինք իսկապէս ազատասէր ժողովուրդ մը, գէթ միայն այդ խնդրոյն մէջ պիտի ըլլայինք միաբան և համերաշխ սուրբ գործին սիրուն համար, այն ատեն պիտի տեսնէինք մեր քով հարկաւոր իտալացի, ֆրանսացի և անգլիացի կամաւորներ, որոնք յաճախ իրենց այդ փափաքը յայտնած են, բայց թափանցելով մեր գաղտնիքներուն մէջ տեսած են մեր խեղճ ու կրակ վիճակն ու քաջուած, Առ այս ունինք զօրաւոր փաստեր, զորս չենք կարող հրապարակաւ յայտարարել, կը թողունք ժամանակին որ ամէն ինչ ի յայտ բերէ:

Մեր այդ բոլոր թերութիւնները բառնալու. Ազգ. գործերն իրեն հարթ ուղիին մէջ դնելու և կուսակցական երկպառակութեանց միանգամայն վերջ տալու միակ միջոցն է յառաջիկայ 1900 թուականին մայիս ամսուն մէջ ԱԶԳ. ԽԱՌՆ ԺՈՂՈՎ ՄԸ ԳՈՒՄԱՐԵԼ Ի Բարիդ, ընդ նախագահութեամբ Տիար Մ. Չերապի և անդամակցութեամբ մի քանի նշանաւոր չէզոք անձնաւորութեանց:

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԸ կուսակցութեանց անցեալ գործունէութեանց վրայ չպիտի վիճաբանի, այլ Ազգ. գործերը վարելու եղանակները պիտի որոշէ ընտրելով Ազգին համակրութիւնը գրաւող վստահելի մարմին մը, որ պաշտօնապէս ճանչցուի եւրոպական տէրութիւններէն իբր հաշտութեան ընդհ. ներկայացուցիչը:

Ամեն հայ, ըլլայ կուսակցական ըլլայ ոչ-կուսակցական. ԽԱՌՆ ԺՈՂՈՎԻՆ մասնակցելու իրաւունք ունենալու է:

Իւրաքանչիւր պատգամաւոր պէտք է ընտրուի իւր սահմանի մէջ բնակող հայ հասարակութենէ, յորմէ ըստանալու է վկայական մը և պատգամաւորը դեռ չի մեկնած վկայագրի մի օրինակը կանխաւ ղրկելու է Տիար Մ. Չերապի հասցէին:

Մեծայոյս ենք թէ՛ մեր սոյն անկեղծ առաջարկը արձագանք պիտի գտնէ հայ ժողովրդի ամէն խաւերու մէջ, և յանուն բազմաշարքար Ազգին, յանուն հազարաւոր նահատակներու յիշատակին, պիտի աջակցին մեզ այս ազգօգուտ ձեռնարկը իրագործելու համար: Առ այս ամեն որ կարող է իր գաղափարը յայտնել Ազգ. ազատ մամուլի միջոցաւ, որուն յարգելի ներկայացուցիչներէն մասնաւորապէս կը խնդրենք որ հաճին իրենց դիտողութիւնները հրատարակել:

Պատգամաւորներու երթեւեկութեան ծախքերը հայ-թայթելու միջոցին վրայ մեր յաջորդ թուով պիտի խօսինք:

ԳԱՂԱՓԱՐԻ ՄԻՈՒԹԻՆ

«Խուփը գլորաւ գաւաւ պուտուկի
Հայկ. առակ

«Խուփ» թէ պուտուկին էր զլորողը այս անգամ, ճիշդը խօսելով, առակին չկրցի ճշդել սակայն իրողութիւնը սա է թէ երկու ջուկ «տիրացուներ», խօսքով յեղափոխական իսկ գործով պահպանողականներ իրար գտան: Այս գաղափարական նմանութիւն ունեցողներն են արաւոսակ-

մանի (ի մասնաւորի Եւրոպայի) Ալֆարականներն և Լիբանականներն: Ինչո՞ւ իրար չգտնան քանի որ գաղափարի նոյնութիւն կայ: Մին կը հաւատայ թէ մեր ազգի փրկութիւնը եկեղեցականները անպայման կ'երպով պաշտպանելու մէջն է. նոյն իսկ Օրմանեան մը, պէտք է պաշտպանել. . . կը բաւէ որ կղեր է, (տես Արմէնիա յիշուի չը յիշուի խնդիր): Միւսն ալ այնպէս հաւատալ կը ձեւացնէ. նոյն իսկ Ալեքեան մը բարձր հեղինակութիւն պէտք է ընդունիլ և . . . անոր թողուլ որ . . . յեղափոխականը և մատնիչը որոշէ (տես Նոր Կեանք):

Մին տասնեւհինգ տարիներէ ի վեր պէտք է պատրաստուինք» կը պօռայ և պատրաստուողներուն կը հայհոյէ. միւսը թէ և ոչ այնքան երկար ժամանակէ ի վեր սակայն իր կազմակերպութենէն ասդին նոյն դաւանանքը ունի:

Մին կը հաւատայ յեղափոխութեան բայց ոչ կռուի, միւսը կը հաւատայ ազատութեան առանց արիւնի:

Մին իրմէ լաւ գործողին կը հայհոյէ միւր իրմէ զօրաւորը կը նախատէ: Եւ մեծ զարմանք պիտի ըլլար որ այս խուսիսն ու «պրտուկ» իրար չգտնէին:

* * *

Գաղափարական միութիւն է ինչ որ մենք կ'ուզէինք. և մինչ մէկ կողմէն Արմէնական ու Մարտական իրարու կը մօտենան անդին ուրիշ համերաշխութիւն մը տեղի կ'ուենայ, ազգով տարբեր սակայն տառապանքներով լծակից երկու ապստամբ ժողովուրդ ձեռք ձեռքի կուտան—Մակեդոնացի յեղափոխականն ու Հայ յեղափոխականը—Ասոնք համոզուած են թէ ժողովրդի մը բանաբարուած իրաւունքները սաղմոս քաղելով կամ նոյն իսկ յեղափոխական ճառեր արտասանելով ձեռք չեն ձգուիր. բռնի ուժին դէմ բռնի ուժ պէտք է: Ասոնք կը հաւատան թէ գերի ժողովուրդ մը հրաշքով կռուող տաքը չգառնար, Տամատեաններ, Մուրատներ, Վազգեններ. Սերոբներ պէտք են որ գործնական կերպով ժողովրդին ցոյց տան ի՞նչ կտրիճ յեղափոխականը վաշտ մը զօրք կ'արժէ, Կախ ու անգաղար կախ. գերի ազգերու միակ նշանաբանը եղած է «մահ կամ ազատութիւն»:

Սպասել մինչև որ ամբողջ ազգ մը, ժողովրդի մը ամենէն վերջին անհատը զարգանայ ու հասնի ինքնաճանաչման այն աստիճանին որ ազատութիւնը ընդգրկէ նոյն իսկ մահով, առանց ուրիշի մը գրգռման այդ անկարելի է, պաամութիւնը և ոչ մի օրինակ կ'արձանագրէ, կենդանի օրինակներ պէտք են մեռած ժողովրդի մը հոգի ներշնչելու:

Ամեն գերի ժողովուրդ ազատութիւն գտած է օրինակելի բուռ մը քաջերու սերմանած ազատասիրական սերմերով որը կենդանացնելու համար իրենց արեամբ ոռոգած են:

Մահ կամ ազատութիւն» ահա ամենէն էական ըսկզբունքը որուն կը հաւատան Մակեդոնացի յեղափոխականներն ու Հայ յեղափոխականները ու գաղափարի այս նոյնութիւնն է յորմէ ծնաւ գործելու միութիւն: Նոյն սկզբունքին կը հաւատան Հայրենիքի մէջ գործող յեղափոխականները առանց կուսակցական բաժանմունքի: Ու այդ սկզբունքը արագ արագ կը տարածուի:

Ուրեմն ժամանակ է որ ամէն հայ առանց ժամանակ կորսնցնելու միանայ կամ գործող յեղափոխականին և կամ խօսքով յեղափոխականներուն: Գաղափարական միութիւն պէտք է. խելքիդ որը որ լաւ կ'երեւնայ այն կողմը զօրացուր ու մի հեռու կեցած միութիւն, միութիւն աղաղակեր:

ԼԵՕ

Պոստոն

ԿԱՐՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

9. ԱՐՇԱԽԻՐԻՆ

«Միութիւն» թիւ 35ին մէջ կարդացի ձեր գրածը. երեք որոշ հարցեր դրած էիք այնտեղ: Նախ՝ դրական փաստ կուզէք «անպատճառ ուրիշ սահմանափակ ժողով մըն ալ ունեցած են» խօսքս հաստատելու համար: Նյս մասին աւելորդ իսկ է երկարաբանել, քանի որ արդէն ուշիմ և անկողմնակալ ընթերցողը իմ գրածներուն մէջ (տես Միութիւն թիւ 28-29) պիտի տեսնէ դրական փաստը: Բայց եթէ կը ցանկաք, որ մի անգամ ևս ներկայացնեմ դրական փաստս, պէտք է, որ իրաւունքի մէջ գրող պարոնը տայ այդ հարցը և կամ դուք յայտարարէք, որ իրաւունքի մէջ գրողը (*** ստորագրութեամբ) նոյնիսկ դուք էք: Եթէ այսպէս չըլլայ, դուք կարող և ազատ էք ուրանալ իրաւունքի մէջ գրուածը, մինչդեռ իմ դրական փաստս նոյն իսկ այդ գրուածքէն պիտի լոյս հանեմ:

Երկրորդ՝ Պապը-Ալիի ցոյցին մէջ զէնք մտցընելու նենգամտութիւնը լռելիայն ընդունելով (բան մը որ իրաւունքի մէջ գրողը բացարձակապէս չը խոստովանիր), կը հարցնէք, «եթէ ընկալուելներով ցոյց ընել տուողները կը բնադատուին, նոյնը ուսմանով կըրկնել տուողները արդարացեալ պէտք է»: Մարդ շատ միամիտ, չըսեմ չարամիտ, ըլլալու է, որ այս երկու պարագաները և իրողութիւնները իրարու հետ չիոթէ, նոյնացնէ. . . . Պ.Արշալիր կերելայ թէ նորակազմ հրնչակեան կուսակցութեան մէջ նորընծայ մըն է, եթէ այդպէս է կ'արգահատինք իր վրայ, իսկ եթէ հինգ ուրիշ մըն է, միւր արհամարհանքը չենք կարող զսպել, քանի որ մեր դրածները և իրաւունքի մէջ իր համախոհներուն կողմէ գրուածը հասկնալու տարրական կարողութենէն զուրկ ըլլալով հանդերձ, կը համարձակի գրչի երկու թիթե հարուածներով ստուեր ձգել ճշմարտութեան վրայ, քանի որ գիտնալով հանդերձ թէ այդ ցոյցը որոշուած էր առանց զէնքի խաղաղասիրական, այսօր կը համարձակի ուրանալ, մինչդեռ իր համախոհը. որ ինքզինքը այն ատենուան Հնչակեան Պօսոյ կօմիտէին անդամ կը յայտարարէ, այս ճշմարտութիւնը չէ ուրացած: Այո՛, պ. Արշալիր, դաւաճան կը կոչուին անոնք, որ որոշուած խաղաղասիրական ցոյցին մէջ զէնքեր մտցուցած են, և Դրօշակեան այն պարոններն ալ դաւաճան կը կոչուէին, եթէ այդ ցոյցը առանց ուսման որոշուած լինէր, սակայն խնդիրը շատ որոշ է և տարբեր. Դաւաճակցականները որոշեր են ուսմանով ցոյց ընել և ըրած են, այոտեղ քննադատելու կամ դատապարտելու և կամ դաւաճան կոչելու ոչինչ չկայ: Մենք ցոյցերու հետախնդրու վրայ չէ որ կը ծանրանանք, կամ կոտորածները ուղղակի չենք վերագրեր այդ ցոյցերուն, շատ շատ տնուղղակի և մասնակի պատճառներ են ատոնք, այլ այդ հետեւանքներու մէջ նոյն իսկ հայ դաւաճաններու մատը տեսնելով է, որ կը զարմանանք և կուզենք զգուշացնել ուրիշները: Ձեր այդ բաղդատութիւնը անշուշտ ընթերցողներուն ծիծաղը միայն պիտի չարժէ. դրչի սուր հարուածներով չէ որ դաւաճանի աւ գործերը կարդարանան:

Երրորդ՝ ընկերային դատաստանի համար լինելիք ծախսերու մասին առաջարկս անիրաւ կը գտնէք, ինչո՞ւ համար: Ես պիտի խնդրէի, որ փոխանակ այդ հարցին պատասխանը Միութիւնի լրջախոհ ընթերցողաց դատողութեան ձգելու, դուք ձեր դատողութիւնը յայտնէիք:

Շատ լաւ, հիմայ այդ հարցը լրջախոհ ընթերցող-

ներու դատողութեան յանձնենք, ինչպէս որ, կը փափաքէր: Սիրելի ընթերցողներ, այժմ դուք դատեցէք թէ այդ առթիւ ըլլալիք ծախսերուն մեր կողմէ վճարուելու առաջարկը ան իր աւ չէ՞...: Որովհետեւ մեզ համար ընկերային դատաստանի կազմութիւնը բնաւ նշանակութիւն չունի, այդ դատաստանն մեզ համար արդէն տարիներու ընթացքին մէջ կատարուած է նոյն իսկ մեր խիղճերուն մէջ, այնտեղ ներկայացած են կենդանի վկաներ, անհրաժեշտ փաստեր, ճշմարիտ իրողութիւններ և դաւաճան Արփիարի ազգագրաւ և հակայեղափոխական գործերը, և նոյն իսկ այնտեղ վճռուած է անոր մատնի չլինելը: Հետեւաբար ո՞վ որ կը ցանկայ անոր պատիւը վերականգնել և կամ անոր հետ գործել, այն պէտք ունի այդ ընկերային դատաստանին, ուրեմն այդ առթիւ ըլլալիք ծախսը կը պատկանի դատաստան ցանկացողներուն, կամ ուրիշ խօսքով, Արփիարի անմեղ գառնակ մը ըլլալն հաստատողներուն: Մենք, մեր կողմէ այդ ծախսը ընելու որ և է պատճառ մի չենք տեսներ, մեր պարտքը այս պարագային մի միայն խօսքով թէ գրութեամբ հայ հասարակութիւնը զգուշացնել է այդ տեսակ լրտես-դաւաճաններէ, եթէ մեր խօսքերուն և մեր գրածներուն տարակուսողներ կան, և եթէ իրենց տարակոյսներուն մէջ անկեղծ են և կը կարծեն թէ անմեղ մը կը դատապարտուի, թո՛ղ միջոցը հայթայթեն ընկերային դատաստան կազմելու, ինչպէս որ նախորդ յոգուածներուն մէջ յիշած եմ: Այո՛, այդ ծախսը ամենայն իրաւամբ Արփիարը պաշտպանողներուն եւ պաշտողներուն կը պատկանի և ոչ թէ մեզ, որ զայն միշտ մատնի-դաւաճան մը կը նկատենք:

ԹԱՓԱՌԻԿ

ԱՆՄԱՀ ԺԻՐԱՅՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Դ.

Մինչ խումբ մը գիւղացի երիտազարդներ օտարականին հետ կը խօսակցէին, յանկարծ պատանի մը ներս մտնելով ծանոյց թէ 4-5 զաւթի է եկած՝ փախստական մը կը փնտռեն: Իսկոյն տխրադեցիկ լեռնութիւն մը տիրեց սենեկին մէջ, բայց շուտ սթափելով փախստականին հագցուցին ձեռք մը տեղական զգեստ ու մօտակայ հայ գիւղերէն մին զրկեցին իսկ իրենց մէջ երկուքը ոստիկաններուն մօտենալով առաջնորդեցին միջտարի հիւրասենեակը, ուր մի քանի վարկեան հանգիստ առնելէն յետոյ, ոստիկաններէն մէկը թուղթ մը ներկայացուց միջտարին, զոր փնթուած էր Ե... քաղաքի ոստիկանական տեսչութեան կնքով, որուն մէջ ծանուցուած էր թէ հայ-խառովարար մը Ռուսաստանէն այն կողմերը անցած՝ հայերը կը զրգռէր օսմանեան կառավարութեան դէմ. կը պատուիրէր նաեւ հայ հասարակութեան որպէսզի այդ տեսակ բաղդախնդիրներու ո՛ր և երբ որ հանդիպին, անմիջապէս բռնելով կառավարութեան յանձնեն, հակառակ պարագային իրենք պատասխանատու պիտի ճանչցուն ու օրէնքի տրամադրութեան համաձայն խստիւ պիտի պատժուին: Միջտարի հիւրասենեակը լեցուած էր գիւղացիներով հոն էին նաեւ գիւղի քահանան, դաւառակի միւտիրին օգնականը և այլն: Ոստիկանական հրամանագրին ընթերցումէն վերջ, չափուլը իր կողմէն կարգ մը հարցումներ ուղղեց գիւղացիներուն. որոնք պատասխանեցին թէ 3-4 օր առաջ թէև օտարական մը եկած էր գիւղը, բայց երեկոյն հասած՝ առաւօտուն մեկնած էր դէպի մօտակայ քաղաքը. ուրիշ գալուն և ուր երթալուն վրայ և ո՛չ մէկին տեղեկութիւն տուած էր: Ոստիկանները ժամէ մը վերջը մօտակայ Տ...

քաղաքի ճամբան բռնեցին. իսկ մեր ճամբորդը անոնց դնացած ճամբուն հակառակ կողմը գտնուած գիւղերէն մէկը հասած էր:

* * *

1878ի Ռուսեթիւրք պատերազմէն վերջ Հայաստանի գաւառաց մէջ զգալի փոփոխութիւն մը տեսնուեցաւ, իւր քաղաքները քաղաքներու և գիւղերու մէջ մատաղ սերունդեան կրթութեանը հոգ տարուիլ սկսած էր, որովհետեւ հակառակ Հայերու ակնկալած եւրոպական միջամտութեան, դարձեալ ֆրանսիկ թիւրք կառավարութեան կամայականութեան յանձնուեցաւ իրենց վիճակի բարւոքումը ի շընորհս Պերլինի վեհաժողովի որոշման: Այն ատեն միայն հասկցուեցաւ որ մինչև մեր կողմէ աշխատութիւն չլինի, օտարի վրայ յոյս դնելը օդին մէջ պալատ կառուցանելու պիտի նմանի. հետեւաբար հարկ էր մի քիչ ալ զէնքի դիմել և յեղափոխութեան հող պատճառել որուն յաջողութեան միակ միջոցն էր վարժարաններու ոյժ տալ:

Ժիրայրի ժամանած գիւղը շինուած էր Եփրատայ մէկ ճիւղէն վրայ, դիրքը լեռնային, գրեթէ 200 տան մօտ հայ բնակչօք. որն իր վարժարանով նշանաւոր էր և կը գերազանցէր ոչ միայն շրջակայ գիւղերունը, այլ նոյն իսկ քաղաքի վարժարանները, առաջինն այնքան յառաջդիմութեան մէջ կը գտնուէր, որ նոյն իսկ անգլիական «Թայմզ» թերթի դրուատանաց արժանացած էր:

Ժիրայր տեղւոյն հոգաբարձութեան հետ բանակցութեան մտնելով՝ վարժարանին մէջ Ազգ. պտտութեան և աշխարհազրուութեան դասերը աւանդելու պաշտօնը ստանձնեց. վարժարանի ներքնայարկը սենեակ մը յատկացուեցաւ իրեն, իսկ ուտեստը ամէն մէկ տունէ կարգաւ պիտի տրուէր:

Ժիրայրը կարճ ժամանակի մէջ աշակերտներուն սիրելին և պաշտելին դարձած էր, զբաղումի ժամանակ իր գործին գլուխն էր իսկ պարագայ ժամանակները միշտ կի՛մատասիրէր իր գտնուած վայրը, իր շրջակայ լեռներով ու գիւղերով:

Աշակերտներէն խելահասները թողլով իրենց զուարճութիւնն պարագայ ժամերին իրենց սիրելի դասատուին հետ կանչէին անիկա այլևս ոչ թէ իրենց վրայ իշխելու յաւակնութիւն ունեցող դասատուներէն էր, (ինչպէս էին սովորաբար այն ժամանակի պատուելի-վարժապետները). այլ իրենց անձնուէր ընկերն ու մենտորը ճանչցած էին զայն: Շատ չտեսեց, փոքր ի շատ խելահաս աշակերտաց մէջ կազմուեցաւ ընկերութիւն մը, որուն նպատակն էր վարժարանի աղբատ սանուց դասական պիտոյքները և այլն հայթայթել:

Ժիրայրի դասատուութիւնը միայն վարժարանի չորս պատերուն մէջ պարփակուած չէր. ամէն առտու պարազ կ'իջնէր ու մարմնամարզութեան դասեր ալ կուտար աշակերտներուն, որոնց մէջէն կ'ընտրէր առողջ ու վստահելիները ու պտոյտի ելած ատեն միշտ հետը կ'առնէր անոնք: Անոնց ամենասիրելի զբօսանքն եղած էր հրացանն ի ձեռին լեռներէն վեր մագլցիլ, անմատչելի դիրքերը պրպտել, լեռնային կեանքն այնքան հաճելի կը թուէր իրենց որ շատ անգամ գիշերները դուրսը կ'անցնէին. իսկ գիւղացիք Ժիրայրի վրայ անսահման վստահութիւն ունենալով, երբէ՛ք չէին հետաքրքրուէր գիշերային այդ տարօրինակ բացակայութենէն: Հայրենիքի Անձնուրաց Զինուորը իր սիրելի սաներուն ընկերացած, առանց ճանչցուելու մէջ եղած քիւրտ ու թիւրք աւաղակախմբերու վրայ, որոնք նախ քան այդ թուականը հայ աղգաբնակչութեան սարսափներն էին, գրեթէ անկարելի էր մէկ գիւղէն միւս գիւղը կամ քաղաքը երթեկել առանց կողոպտուելու և շատ անգամ ալ վիրաւորուելու: Հայ գիւղացւոյն ոչխարն ու

արջառը արօտառեղիններէն խմբովին քշելով կը տանէին. կառավարութեան եղած բողոքները միշտ անլսելի կը մնային. իսկ հայ գիւղացին ինքնօգնութեամբ այդ չարեաց առջեւն առնելու միջոցները խորհիլ երբէք մտքէն իսկ չէր անցներ, վասն զի դարաւոր ստրկութիւնը և օգիտութեան թանձրամած խաւարը, միւս կողմէն բարբարոս թուրք կառավարութեան ճնշումները կաշկանդած ու խաղալիք դարձուցած էին զինքը այդ ձրիակեր ու ծոյլ տարրին: Կարծես այդ բաւական չէր, որ միւս կողմէ մեր հաստափոր եկեղեցականներն ալ իրենց «ով որ սուր առնէ սուրով պիտի իյնայ» և «Քրիստոսի երջանկութիւնը հանդերձելի մէջն է» յիմարական բարբառներով աւելի կը պրկէին թշուառ ժողովրդի սարկութեան կապանքները:

Իսկ մեր երիտասարդ և անծանօթ դաստառուն՝ միշտ այս վարդապետութիւններուն հակառակը կը քարոզէր, իր նշանաբանը «ակն ընդ ակն»ն էր և որ աւելին էր, նա իր պաշտօնակիցներու շատերուն պէս՝ փափկաճաշակ կեանքը չէր սիրեր. հակառակ իր բարձր ուսումին և զարգացումին միշտ տրեխները ոտքը, հրացանն ուսին, իբր գիւղացի պարզ մշակ մը ժողովրդին բարեկամն ու պահապան հրեշտակն եղած էր մերթ դաշտին մէջ և մերթ լեռներու վերայ: Այն օրէն՝ երբ ոտքը դրաւ պաշտօնավարած գիւղը վարժարանին մէջ, բոլորովին կերպարանափոխ եղաւ ոչ միայն վարժարանը այլ ամբողջ գիւղը: Գիւղացիները արթնցած էին. առաջուն այն երկչոտները չէին: Մինչև այն ժամանակ գաւառակի միտիքը իրենցմէ նւթապէս և բարոյապէս շատ ստոր թիւրք գիւղերէ կ'ընտրուէր. այժմ գիւղալիք միացած շրջակայ հայ գիւղերու հետ պայքար մը մղեցին և յաջողեցան իրենց գիւղէն ընտրել և վաւերացընել տալ միտիքը բացառիկ մրցմամբ: Այլևս այդ գիւղախումբը ըստ բաւականին հանգարտած էր վասն զի լեռնային աւազակութիւնները այդ կողմերը զրեթէ դադրած էին, եթէ երբէք պատահէր զէպք մը, այն ալ միտիքի մէկ ազդարարութեան վրայ 40-50 երիտասարդներ զինուելով կը հալածէին աւազակները և բռնելով զանոնք գողոնը յետս կը դարձնէին ու լաւ դաս մը տալով կը ճամբէին: Սակայն աւաղ, որ երկար շտեմեց՝ (հոս անդն է ըսել «հայն է հայուն մատնիչն և հայն է հայուն դահիճը»), ժիրայրի պաշտօնակիցներէն մին և մէկ-երկու «չորպաճի» ներ իրարու նման վատերը միացած, կուսակալին տեղեկագիր մը ղրկեցին, որով կը զրպարտէին զժիրայր և կամ աւելի ճիշդ է ըսել կը մատնէին ըսելով որ «քանի հոս եկած է, արիւնի հոտը քիթերնուս պակսած չէ»:

(Շարունակելի)

ԱԼԻՍԻ ՈՐԴԵԳԻՐԸ

ԼՐՏԵՍ — ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ, ԻՆՃ ՏԵՍԱՐԱՆՈՎ

Դիտեց և Գրեց

ՃԵՄԱՐՏԱՆՈՍԵԱՆ

ԺԱ

Վկայ մը — (ոտքի ելնելով) Իմ գիացածներս թէև ուղղակի չեն վերաբերիր ներկայացուած ամբաստանութիւններուն, սակայն անոնք կարող են լոյս սփռել ամբաստանեալին նկարագրին և հոգիին վրայ: Ամբաստանեալը «Միացեալ Հնկերութիւն»ը կազմող Արաբ առեւտրական կերութեան բարաւզարն եղած ժամանակ մեծակա գումար մը կոկորդն անցուցած է. և այս զէպքը ժամանակին հաստատուած է, եւ անդամ էի նոյն ընկերութեան:

Ուրիշ մը — Լուսահոգի Խորէն Նարպէյ Սրբազան

Ռուսաստան գտնուած ժամանակ Ամբաստանեալը անոր հետեւեցաւ և լրտեսեց, այս պարագան ժամանակին վերկայած են վստահելի անձեր:

Ուրիշ մը — Այդ մասին կարող եմ տեսածս վկայել: Խորէն Նարպէյին հետ շոգենաւին մէջ կը գտնուէի, Արփիար ալ նոյն շոգենաւին մէջ էր, ինչպէս նաև Տէյլին իւր թղթակից անդիւացի Ֆիշերալտը: Արփիար շատ անհանգիստ ու անհանգարտ զրութեան մը մէջ էր, կասկածելի դիրքով մը յաճախ վեր տախտակաւածը կեւնէր և վար կ'իջնէր, և մեր քով գալով կըսէր «չիտակը ես կը վախնամ, շոգենաւին մէջ լրտես կայ մեզ կը լրտեսէ, զգոյշ եղէք. եթէ Պօլիս ելլենք մեզ կը ձերբակալեն, եւն.»: Ֆիշերալտ Արփիարի զէմքին վրայ կարգաւորվ անոր հոգեբանութիւնը մեզ ըսաւ — այս մարդը կասկածելի կերեայ ինձ, իր գէմքը կը մատնէ կոր, զգուշանալու է: Նարպէյ պատասխանեց — «Արգէն վրան վստահութիւն չունիմ, իր վարմունքէն հասկցայ որ զիս կը լրտեսէ, և յատկապէս անպատճառ թուրք կառավարութեան կողմէն զիս լրտեսելու պաշտօն ունի»:

Արփիար — (ոտքի կելնէ և խօսելու շարժում կընէ) Նախագահ.....:

Նախագահ — Այժմ պատասխանելու իրաւունք չունիք, ամենէն վերջը խօսքը ձերն է, մտիկ ըրէք և յետոյ կը պատասխանէք:

(Արփիար կը նստի)

Ուրիշ մը — Արփիարի նկարագրին վրայ գաղափար մը կազմելու համար պէտք է յիշեմ, որ միեւնոյն լըրտեսի դերը Լատարած է նաև Մակար Կաթողիկոսի ընտրութեան ժամանակ, այս մասին վկայ են «Արեւելեան Մամուլ» մէջ 1989-90ին Մ. Մամուրեանի կողմէ գրուածները, հրապարակաւ և լրագրութեան մէջ համարձակօրէն Արփիարի համար գրուած է Մոռուցում մատնիչ, դաւաճան, լըտես և բռնաբար:

Ուրիշ մը — Ժողովին ուշադրութիւնը կը հրաւիրեմ «Արեւել» լրագրի մէջ Արփիարի կողմէ գրուած այն յօդուածը, որով Ռուսահայ Պրօֆէսօրի մը զէմ սկզբունք չունենալը կը պաշտպանէր, այսինքն. սկզբունքի ծառայելը վնասակար ցոյց կտար, հետեւաբար իր անսկզբունք լինելը կապացուցաւ:

Յ. Ճանկիւլեան — 1890 յուլիս 15ի ցոյցէն առաջ Պօլսոյ վարչութեան գանձապահն ես էի և ձերբակալուելէս քանի մը ամիս վերջ ատենապետն եղած էր Մուրատը: Հասցէս փոխուած չէր, Գ. Ա.ի կողմէ 2 000 ռուպլի Արփիարին կը յանձնուի ի նպաստ գործին, ինձ կամ ընկերներուս հասցնելու համար. այն ժամանակ Մայր-Երկրի կեդրոնը Պոնտոս էր: Մ.ի կը զրեն կովկասէն, որ Արփիարը կուգար 2 000 ռուպլին իր հետ: Արփիար կը հասնի, վերջապէս Մ.ի ցոյց կտայ 2 000 ռուպլին: Իմ բանտարկուիլս արդէն գիտէր, նամակ մը կը գրէ Մուրատին այդ ստակներուն համար, նամակը կառավարութեան ձեռքը կանցնի Մամբրէ վարդապետի միջոցաւ: Նաղմի ներկայութեան Արփիար կուրանայ 2 000 ռ.ի գոյութիւնը, բայց երբ նամակը մէջ կը բերեն, կը խոստովանի թէ՛ ինք և թէ Մ.ը: Արփիար բանտ կը նետուի, ուրկէ երբ զանազան հրաջներով ազատուեցաւ, Մուրատ արդէն փախստական էր. այդ կերպով Արփիար գործին յատկացուած 2 000 ռ. ի գումարը իր կոկորդը կանցնէ առանց խղճահարութեան: Իսկ յեղափոխականի մը գրչին անվայել և ստորնացուցիչ այն հաշակաւոր հրապարակային մեղադրութիւնը բաւական է իր անձը դատապարտելու, ճշմարիտ և վանձնուէր յեղափոխական մը երբէք չը զիջանիր այդ-

պիսի ստորնութեան մը, դաւաճանել յեղափոխական սուրբ գաղափարին... Գալով Լօնտոնի մէջ կատարած պառակտիչ ու հակայեղափոխական դերին, այդ մասին վկայ կը գոչեմ իմ այն ժամանակ գրած գիրքս՝ «Դիմակաւորները» և Մարտ, Նոյեմբեր, Դեկտեմբեր, Զնչակ, Միութիւն, Շարժում, Տիգրիս թերթերը:

Յ. Շ. — Այդ դատապարտելի մեղայագիրը իր պատմութիւնն ունի: Արփիարի հետ ես ալ բանտն էի: և մօտի սենեակներէն մին բանտարկուած էի: Յոյնէ դարձած Մուսթաֆա էֆէնտի անունով փօլիս մը կը հսկէր, երկար փորձերով համոզուեցայ, որ այդ փօլիսը լաւ մարդ մըն էր և ինձ հաւատարիմ: Մեր ընկերները ազատուած էին ընդհանուր ներման արժանանալով, Արփիարի հետ ես ալ ներման չէի արժանացած: Հըսկոյ փօլիսը կը պատմէր թէ՝ «երբ ձեր ընկերները ազատեցան, Արփիարի վրայ խենթութիւն մը եկաւ. ինքիմէ ելաւ ու սկսաւ տղու պէս լալ, յետոյ Հիւսնի պէյը կանչեց անոր հետ տեսնուեցաւ, յետոյ ալ Նազըմ փաշայի հետ: Փաշային հետ ֆրանսերէն աղերսագիր մը գրեցին, Արփիար ստորագրեց և փաշան զայն Սուլթանին տարաւ. անպատճառ պիտի ներուի: Արփիարը ես լաւ մարդ չը տեսայ, շատ մարդ մատնեց: Պալատէն ներումը եկաւ, Արփիար խենթի նման ցատկելով քովս եկաւ և ըսաւ — հոգ մի՛ ըներ, ես քեզ կը հանեմ — : Եւ ամենուն յայտնի է, որ Արփիար Պարթաբքարանի Մայր-Եկեղեցիին մէջ միւս բանտարկեալներուն նման ո՛չ հրաժարի մք ըսաւ և ո՛չ ալ երդում ըրաւ: Հետեւալ օր Նազըմ փաշայ զիս իր մօտ կանչելով հրամայեց, որ Սուլթանին ուղղեալ պատրաստ թուրքերէն աղերսագիրը ստորագրեմ. որպէսզի ներում ստանամ: Թուրքերէն գիտեմ, աղերսագիրը կարդացի. գործիս չեկաւ. զիս կը պարտադրեցնէր ամեն բան խոստովանելէ և հաստատելէ զատ, ապագային կառավարութեան մատնել ճանչցած ու պատահելիք յեղափոխականներս: Մերժեցի, փաշան պնդեց, — չեմ գրեր, ինձի այդ ազատութիւնը պէտք չէ — պատասխանեցի: Փաշան նեղացաւ — կուզէք ես թուրքերէն կը գրեմ — ըսի, հաճեցաւ և երկու տող բան գրեցի ընկերներուս նման իմ ներումս խնդրելով: Հետեւալ օր ներումս ստացայ: Երբ դուրս եկայ, Օրթագեզի ազգայինները, որոնց մէջ «Արեւիք» լրագրի աշխատակիցներ ալ կային: զիս պատուեցին փառաւոր հացկերոյթով մը, առանց Արփիարը հրաւիրելու, զայն նախառեւ համար: Երբ Պօնտոս վերադարձայ, Արփիար ինձ նամակ մը գրեց, նամակը կարդալով արիւնս գլուխս ցատկեց, սարսափելի բան, ինքը լրտես-մատնիչի դեր կը կատարէր և զիս ալ այդ նախկինով կը հրաւիրէր նոյն դերը կատարել: Անմիջապէս գրեցի իրեն, որ երկրորդ անգամ չհամարձակի ինձ նամակ գրել և թէ յայտնեցի որ յարաբերութիւնս խզած եմ իր հետ:

Նախագահ — Կարելի չէ՞ նամակին պարունակութիւնը իմանալ:

Յ. Շ. — Դժբաղդաբար այդպիսի հաստատուն փաստ մը ձեռքէ հանեցի, այն միջոցին իսկ բարկութեամբ պատուելով մէկ կողմ նետեցի, բայց պարունակութիւնը այն օրուան նման աչքիս առջև է, իմաստն այսպէս էր, — Լսեցի որ այդ կողմերը հայ հրոսակախուժներ կան գիտես որ անոնց շարժումը մեր դատին վնասարեւ է, խնդրեմ անոնց անունները և տեղն ինձ յայտնեցէք, որ կառավարութեան իմաց տալով ձերբակալիլ աւամ:

Պ. Տօնապետեան — Արփիարի մատնութիւններուն ահանաւանք եմ, երբ զիս Պէյրութի վալիին ներկայացուցին, վալին ինձ ցոյց տուաւ Արփիարի հարցաբն-

նութեան թուղթը, որուն մէջ զիս մատնած էր, ինչպէս նաեւ ուրիշները: Ժամանակին հրապարակաւ յայտարարած եմ:

Վկայ մը — Վահան վարդապետ Տէր Մինասեան ինձ բացարձակապէս յայտնած է, որ մի օր ինքը Մամբրէ վարդապետին հետ Նազըմ փաշայի տունը գտնուած ժամանակ Արփիար և Տիրան Քէլէկեան ներս մասն, փաշան ժպտելով ըսաւ իրեն, — մի՛ քաշուիք, ասոնք ալ ձեզ նման մեզ հաւատարիմ են —, ասկէ զատ, Արփիար ինքը չէ կարող ուրանալ, որ երբ իրեն հարցուցի թէ Նազըմին հետ միշտ յարաբերութիւն ունի, պատասխանեց, — կառավարութեան գաղտնիքը իմանալու համար Նազըմին բարեկամ կը ձեւանամ —, մինչդեռ ընդհակառակը, ես շատ լաւ գիտէի, որ Նազըմ փաշայի հետ բարեկամ ձեւանալով կառավարութեան գաղտնիքները իմանալ կարելի չէր, այս մտածումս իրեն չը յայտնեցի, իրեն խոստովանութիւնն ինձ բաւական էր:

Թափաւիկ — Բանտէն նոր ելած Պօլիս եկած էի, բիշ օրէն պիտի ամուսնանայի և պսակի հանդիսին ներկայ պիտի լինէին իմ ազատարարներս՝ Անգլիոյ Դեսպանն ու Դեսպանուհին, այսինքն խոստացեր ու փափաք յայտնել էին, անշուշտ անոնց ներկայութիւնը մեծ նշանակութիւն ունէր թուրք կառավարութեան համար: Հարսանիքէս չորս օր առաջ Արփիարը կրկին տեսութեան եկաւ, Դեսպանին ու Դեսպանուհիի հարսանիքս դալն իրեն յայտնեցի: Հետեւալ օր Արփիար դարձեալ եկաւ և ձեռքը ոտքը իրար աւելով ըսաւ, — Լըսեցիք ինչ եղաւ. երէկ գիշեր զրաքննիչին հետ երկար բարակ կռուեցանք, երեկուան «Լը Մօնիթէօռ Օրիանդալ»-ի մէջ (11 Յունիս 1895) ձեր ամուսնութեան և Դեսպանին ու Դեսպանուհիին կնքահայր ու կնքամայր ըլլալու մասին քանի մը տող գրուած էր, ուզեցի Հայրենիքի մէջ արտատպել, թող չը տուաւ — : Ես զարմացայ մնացի. որովհետեւ անոնց ներկայ գտնուելուն լուրը մի միայն Արփիարին հաղորդած էի, մանաւանդ կնքահայրութեան խնդիր ալ չի կար: Յետոյ իմացայ որ արփիարի միջոցաւ Նազըմ փաշայ իմացեր է անոնց գալը, կերպով մը արգելք լինելու համար հրատարակել են այդ լուրը «Մօնիթէօր»-ի մէջ, առանց հայ թերթերու հրաման տալու: Եւ իսկապէս ալ կառավարութիւնը յաջողեցաւ, որովհետեւ Դեսպանն իմացաւ անցած դարձածը, և ցաւ յայտնեց, որ ներկայ չը պիտի կրնայ գտնուիլ, ինձ վնաս չը պատճառելու համար: Այս մասին Արփիարի խաղցած դերը լաւ հասկցայ:

(Շարունակելի)

ԽԱՌՆ ԼՈՒՈՐԵՐ

«ԻՐԱՆԻՆԻ»-էն կը տեղեկանանք որ Հայաստանի մէջ ահա լի ջարդերը կատարել տուող տխրահուշակ Շաքիր փաշա իմ ոճրագործ կեանքը յանձնեց է սատանային հոկտ. Ծինի Սինոպ. անշուշտ դժոխային պաշտօնեաներէն ընդունելութիւն գտած է: Նոյն թերթէն կ'իմանանք որ Ուորէն Ալըքեանն ալ իր մահկանացուն կրնքեր է յետ կարճատեւ հիւանդութեան: Կ'ըսուի թէ մահուրէն ժամանակ մը առաջ 1500 ոսկիի արժողութեամբ իր նորաչէն տունը կտակեր է ազգին: Իցի՛ւ թէ իրականութիւն ըլլար:

* ԱՄԵՐԻԿԱ հրատարակուող «Չայն Հայրենեացի» մէջ կը կարդանք, որ Ռուս և ֆրանսացի կառավարութիւնները գաղտնի համաձայնութիւնով մը որոշեցին իւրաքանչիւրը մէկ մէկ ծովակալով մարտանաւեր ղրկել: Պօլիս Սուլթանը ողջունելու: Այս բանը կ'իմանայ Կ. Պոլսոյ բրիտանական դեսպանը և կ'երթայ կը սպառնայ Սուլթանին թէ եթէ այս բանը պատահի, ինքը պիտի ստիպուի հեռագրել Լոնտոն որ անգլիական մարտանաւերու խումբ մը անմիջապէս Պոլիս գայ:

* * ՎԻՆՆԱՅԻՆ նոյ. 11 թուականով կը հեռագրեն թէ քիւրտերը Կարնոյ շրջակայքը գտնուող հայկական երեք գիւղերու վրայ յարձակելով բոլոր բնակիչները սրէ անցուցած են, իսկ կիներն ըստ կենդանւոյն այրած են: Թուրք զօրքերը փոխանակ արգիլելու ոճրագործութեանց մասնակցեր են:

* * ՎԻՆՆԱՅԻՆ նոյն թուականով կը հեռագրեն: Ռուսիա Աֆղանիստանի էրաթ քաղաքը գրաւեր է յանկարծ: Էրաթ Աֆղանիստանի մայրաքաղաքէն յետոյ ամենանշանաւոր մեծ քաղաքն է, կը գտնուի Պարսից սահմանին մօտ և ունի 100,000 բնակիչ:

* * ՄԵՐՊԻԱ ԵՐԿՈՒ ամէսէ ի վեր ռազմագիտական փութկոտ պատրաստութեան մէջ կը գտնուի: Զինուորական գրոծոց նախարարը Գերմանիա մեկնած է նոր հրացաններ ու թընդանօթներ ապագրելու համար: Սերպիոյ այս ընթացքը Պուլկարիոյ մեծ մտահոգութիւն պատճառած է:

* * ՍՕՅԻԱՅԻ Մակեդոնական քօմիթէի թեւադրութեամբ պուլկար ասպետակային խմբեր յաճախ Մակեդոնիա մըտնելով սաստիկ կը հալածեն յոյները: Վերջերս քանիներ ըսպաններն են Սէրպի մօտ յունական եկեղեցի մ'ալ կրակի առին: Պոլսոյ յունական զեսպանի զիմուսներուն շնորհիւ թուրք կառավարութիւնը զինուորական ոյժ մը պիտի ղրկէ հոն խռովութիւնները զսպելու համար:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

... խմբագիր,

Հետեւեալ աղերսագիրը խրկուած է առ մեզ ի գործադրութիւն, ուստի ըստ որում հայ եմ, և կենացս մաշած բեկորներովը դեռ անձնաւոր, յօժարակամ կ'ընդունիմ հնազանդիլ համարիւն զաւակացս և եղբարց ձայնին:

Ահաւասիկ աղերսագրին պատճէնը.

... Սգաւոր Զարհատ աղբար,

Նշանաւոր կտակի մը նկատմամբ յառաջ քան զայս լսեցինք ձեր ճշմարտախօս ձայնը, և ըմբռնեցինք ձեր անկողմնակալ ոգին. որ մարդկային ազգի կատարելութեան մի բացորոշ ապացոյցն է, ուստի կուգանք աղերսել, որ հաճիք ժողով մը կազմել և — Օրմանեքաղաքացիին — յիշուելու կամ չյիշուելու հոգեյոյզ խնդիրը ձեր նախագահութեանը տակ վիճաբանութեան դնել, և կարելի եղած հաւանական լուծումը տալ, վասնզի կը տեսնենք որ, Սաղայէլ, և իւր խնկարկուն Սատանայ (Օրմանեան) ձեռք ձեռքի տուած Հայոց դիւցազնական ազգը ջնջիլ, և Աստուածաշէն Հայաստանը քանդել ու կործանել կաշխատին. մին Քրիստոսի խաչովը, և միւսը Մուհամմէտին խուրանովը. ահա երկու խարդաւանեալ գործիք ի ձեռին, բազմաթիւ հայ դիակներ կոխատելով համընթաց կարշաւեն դէպի սոսկալի նպատակը. ասոնց մին սատանայի իսկատիպ փոխանորդը հայու գետացեալ արեամբը պատարագ կը մատուցանէ գերեզմանացեալ Հայաստանի մէջ, և միւսը իւր պղծեալ ապստէսը կը կատարէ քաղաքակիրթ աշխարհի առջև անողորմ և անպատկառ:

Արդ քանի որ զայս չարունակ կը տեսնեմք, սըրտերնիս հնոցի նման անմաշ բոցերով կը վառի և չենք գիտեր թէ ի՞նչ ընելու է, յիշուի՞ թէ չյիշուի, և կամ ուրիշ բան մը:

Ուստի կաղաչենք որ, այս կենսական խնդիրը նրան առնելու շնորհ ընէք:

Մնամք ձեր վշտակիր ծառայքը՝ այն է ճշմարիտ հայերու ամբողջ Ստորագրութիւնը:

Ազնիւ հայրենակից,

Խնդրեմ անկողմնակալ եղի՛ր, և լրջութեամբ ունկնդրէ խօսքերուս. եթէ կայ Հայկայ արիւնէն կաթիլ մը երակացդ մէջ, և եթէ սիրտդ գթոյ իրաւանց, և պարտուց մի նշանախեցը գոնէ կը պահէ իւր մէջ, և այնու դու ալյուզուած և ցնցուած ես և բուռն եռանդ մը կը մղէ դեզ հնարք մը ձեռք բերել, և տարաբաղդ եղբայրներդ փրկել: Եւ որովհետեւ միջոց կը փնտռես քու բռնաբարեալ բարեպաշտ մայրդ, քու շներէ լլկեալ քոյրդ, գաղաններու ձեռք հեծող հարազատ եղբայրդ փրկել, վասնզի ասի ընկերական կենաց և պատմութեան մէջ ամենամեծ նախատինք մըն է կայտառ երիտասարդութեանդ, և ամօթահար ստորնութիւն մ'է քու կորովի հասակիդ, ուստի պէտք է գիտնաս, թէ ի՞նչ որ ալ ըլլայ փրկութեան միակ միջոցը միայն և մի միայն ազգային միութիւնն է:

Եւ որովհետեւ ազգաշէն միութիւնը ոտնակոխ եղաւ, և մենք դժբալդաբար շահամոլներու ձեռք երկպառակութեան անձնատուր գերիներ դարձանք, այլեւս ի՞նչ կը սպասես, արդէն ոճիրը վճռուած է և կործանումը կատարեալ:

Հիմայ այս ահարկու պարագայի մէջ Օրմանեանի բան խօսելու իրաւունք չեմ տեսներ, «զի որում շատ տուաւ, շատ խնդրելի, և որում սակաւ, սակաւ»: Ըստ Աւետարանի այս մարդուն բան տրուած չէ, որ պահանջելու իրաւունք սւնենանք: Նախ որ զանի քաթօլիկութիւնը սերմանած է. և մենք որովհէտ զատ ուրիշ բան չենք կրնար հնձել. երկրորդ ու Օրմանեան Սահմադրական պատրիարք չէ, վասնզի Իզմիրեան ո'չ թէ սահմանագրապէս. այլ բռնութեամբ տակ հրաժարեցաւ, և քանի որ սահմանագրութիւնը դեռ գործադրութեան մէջ է, Իզմիրեան այսօր և միշտ պատրիարքն է հայոց, և ո'չ այլ ոք:

Պիտի հարցուի թէ, ուրեմն ի՞նչ է Օրմանեան:

Հայ չէ, և ո'չ ալ պատրիարք հայոց, այլ սուլթանի լիազօր փոխանորդը, որ հաւատարիմ իւր կոչման ամենաանձնութեամբ ո'չ միայն նորին վեհափառութեան հաճոյ ըլլալու, այլ տենչ ի սիրտ կաշխատի որ, օր մ: թերեւ մարգարէ ըսուած Մուհամմէտին ալ սիրելի լլայ, որու հեշտարար հովանիին տակ Հուրիներ և փեքիներ կը վխտան նոյն իսկ Օրմանեանի փրնտաւ ու չգտած բանը. — ով որ մոլութեան ենթակայ է, չկրնար առաքինանալ:

Գիտեմ հայոց ժողովուրդ Օրմանեանի այս բռնապետութեան դէմ իրաւամբ կը գանգատիս, բայց ինչո՞ւ երկուց չարեաց փոքրագոյնը ընտրելու բաղդաւորութեան չես մըտնէր, ինչո՞ւ չես խորհիր որ, եթէ Սուլթանը Ահա Սօֆիայի պաշտիմա՞ Մուհամմէտ էֆէնտին Հայոց Պատրիարք ընտրէր, և Արթին փաշային ու անոր արբանեակներուն հրամայէր որ, այս միւսլիման (թերեւ Օրմանեանէն աղէկ ելլար) սահմանադրապէս պատրիարք պիտի ընտրէք. ի՞նչ պիտի ընէին, և գուր ի՞նչ ըրէք որ, ի՞նչ ալ պիտի կրնայէք ընել: Կամայ ակամայ քուէից մեծամարտութեամբ պիտի հռչակէիք այսպէս ամենապատիւ և բարձրաշնորհ տէր տէր սրբազան պաշիմա Ահա Սօֆիայի Մուհամմէտ էֆէնտի Հայոց երեսփոխանական ժողովոյ քուէից մեծամասնութեամբ Տաճկաստանի Հայոց պատրիարք ընտրուեցաւ:

Արդ եթէ խնդիրն այս վիճակին մէջն է, այլեւս ի՞նչ կը խլտիք, բանակներ չունիք, զէնք ու ռազմաթիւրք չունիք, ուրիշ անղէ վստահելի պաշտպան չունիք, միայն բան մը կայ, — Սէր առ հայրենիս, և սիրտ վառն հայրենեաց, ցաւ է ըսել թէ, կըլտեսեմ որ, այն ալ չունիք, ու-

րեմն լուեցէ՛ք և խոնարհեցէ՛ք ձեր անողոր ճակատագրին առջև գիտնալով որ, լոկ յիշելն ու չյիշելն բնական ոգուտ չունին, և չանտինգիր արգելքներու դէմ չարաչար կը զըրգոն արտասանմանի հայերը: Եւ որովհետեւ այսօրինակ աղետարն խնդիր մը ժողովով լուծել խնդրուած է, ուստի առանց անկարողութեանս նայելու, պակ մը անցեալ երիտասարդութեանս բուռն եռանդներովն ոգևորուած, (ա՛հ, անգութ երիտասարդութիւն ինչո՞ւ չուտով հեռացար ինձմէ) կիշնեմ վերստին յասպարէզ, չկրնալով տոկալ Հայոց այն արտաճմկի աղաղակներուն, որոնք վայրկեան առ վայրկեան որոտընդոստ կը հասնին ականջիս: Ուստի ատենանք բացուած է:

Ատենապետ.— Յառաջ եկէք նախադարձակ Վառնացիք, մօտեցէք անոր հետեղ Ռուսմանացիք, Տոպրիչցիք, և այլ գաւառացիք: Քովիկս եկէ՛ք Ամերիկայի մէջ կատարեալ ազատութիւն մայեղող արիւստիտ Հայաստանցիք, որ ժամէ ի ժամ ձեր դրախտը՝ աստուածաշջիկ Հայաստանը մորմոքելով կը լիւնէք, և չէք կրնար անոր օգնել միայն սա միտթաբութիւնը ունենալով որ, որ մը աղատութեան արշալոյսը մեծին Գոլոմպոսի գերեզմանէն թերեւս պիտի բարձրանայ Մասեաց գագաթը:

Դէմն կարգաւ շարուեցէք—մենք ալ ազգ. իրաւունք մը պաշտպանելէ ետ կեցողներէն չենք—ըսող յանդուրն Աղեքսանդրացիք. հետերնիդ առնելով Յովնանի քնով գատապարտուած Գահիրէն, որ կը լսէ ու չուզեր հասկնալ:

Սրբիյի՛ Հայրենակիցներս, բարով եկաք. նստեցէք, վասնզի ըստ ձեր խնդրանաց ձեզի հարցնելիք, և ձեզմէ հասկնալիք ունիմ: Գիտեմ, չյիշուի—պօռացիք, դռոււմ գոչումնիդ աշխարհ բռնեց, և մեզ յիշեցուց սա առակը թէ «երկունս կալաւ լեռան անագին, և ձայն բարձրացեալ գոչէր ուժղին, երկինք երկիր կայր ի գնին, ահա՛ ծնաւ մուկն ջնջին»:

Ահա այսպէս դրոգեցիք ամէն կողմ, և ամէն որ ակնկալուց կը մնայր տեսնել թէ, «այս երկու մեծ լեռը» ինչ պիտի ծնին, ո՞վ պաշտ, ոչինչ. ջնջին մուկ մը (ֆնտըխ սրչանի) չյիշուի: Վա՛յ ք վա՛յ, վա՛յ:

Արդ ըսէք ինձի ահա չյիշուեցաւ, բայց այս եռանդուն տուրեալս մէջ ի՞նչ շահեցաք, օգուտ թէ վրասն նպատակնիդ առաջ գնաց թէ ոչ:

Ժողովականք միաձայն.— Այդ մի հարցնէք Տէր ատենապետ, մեր նպատակի երկինքը մեծագին ամպերով ծածկուած է, մեր ազգին և տան մէջ բաժանումն մտած է, ըստ այնմ թէ «ամենայն տուն և թագաւորութիւն եթէ յանձն իւր բաժանի, ոչ կարէ կալ, այլ կործանի»: Մենք հիմայ անմիաբանութեան գետնաշարժով կը տատանինք, և եթէ Աստուած մեզի չօգնէ, բնաջինջ պիտի ըլլա՛ք: արդ այս չարաբաստիկ պաշտպան մէջ ի՞նչ կրնանք ընել, շուտաւ ճիշդ դուք ճամբայ մը ցցուցէք, որ անկէ երթանք:

Ուրիշ ձայն մը.— Ուրեմն թշնամին մեզ՝ անգթաբար հարուածեց, որովհետեւ անմիաբանութիւնը մեզ քայքայեց, մենք ալ չկրնալով բարձրահասակ էշուն հասնիլ, որոշեցինք գոնէ անոր փալաւնը՝ Օրմանեանը հարուածել, և ասով ի լուր աշխարհի գոնէ պատմական նախատիք մը ընել այն անտանելի չարեաց փոխաբէն: Ըսէ՛ք Տէ, ատենապետ, տրեւարն ու հարստահարեալն տակէ աւելի ի՞նչ գորութիւն ունի, և ի՞նչ կրնայ ընել:

Ատենապետ.— Ձեր ըսած կը նմանի այն ողորմելի կընոջ, որ ձմեռ եղանակի մը մէջ օր մը գայլ մը գիւղը կը մտնէ և կնոջ փոքրիկ տղեկը յափշտակելով կ'սկսի փախչիլ, տղեկը կողկողադին կ'աղաղակէ, մայրը եռեւէն ճիւղով կը վազէ, և վերջապէս գայլը ապառաժուտ բարձունքի մը վրայ ելնելով, կ'սկսի տղեկն յօշոտել և ուտել:

Տղեկին ողորմելի մայրը այս սոսկալի տեսարանէն այլ յայլմէ եղած, գրեթէ չնչասպառ տուն կը գառնայ: Գիւղացիք՝ որ այս չարաբաստութեան գիտակ էին, կնոջը շուրջը կը ժողովին, և կը հարցնեն—ինչպէս եւրոպացիք ցաւելով մեզի կը հարցնեն) խեղճ կին, երբ գայլը զաւակդ կերաւ, ի՞նչ րիր—Աստուած իմ որպիսի սոսկալի վայրկեան:

Կինը հեկեկալով և բոցաշունչ հառաչանքներով կը պատասխանէ.—գայլին երկու աչքերը կուրնայ, պատիժը Աստուծմէ գտնայ, այն խեղճն ալ դեռ մեզի պէս Աստուծմէ կը յուսայ իբր այն թէ, Աստուած մեզի երկու ձեռք տուաւ, ճանճ վառնելու համար (որ այս պաշտօնը էջը պոչովն ալ կը կատարէ): Երկու ոտք տուաւ տեղէ տեղ չըջնու և ուտեստ գտնալու համար (ինչպէս որ գայլը անառախ մէջ որս կը փնտռէ, և մեր գանկին մէջ քիչ մը

խելք դրաւ, որ միայն մեր անձնական շահեր, նայինք, և մեր կուրծքին տակը սիրտ մ'ալ դրաւ, որ հեշտութեանց սրահի նման ամէն հաճոյից ասպարէզ ընենք):

Սեղճ կինը արտասուածոր աչօք կը շարունակէ ըսիլ թէ «զաւակս անմատոյց ժայռի մէջ վրայ հանեց ու բզբտելով կերաւ»:

—Եւ դու ի՞նչ րիր, կը հարցնեն:

—Կին մը ի՞նչ կրնայ ընել, կըսէ, չենք չնորհք կը պօռայ, կը կանչէ ու կուլայ. ես ալ կանակս հողին տուի, աչքս դոցեցի. բերանս բացի. ինչէ՞ր ըսի. ինչէ՞ր ըսի, ինչէ՞ր ըսի. օխ, ըսի եւ. թող ան ալ երթայ հասկնայ:

—Այդ վայրապար խօսքերէդ ի՞նչ օգուտ տկարամիտ կին, կըսեն շուրջը եղողները, անօրէն գայլը իր փորը լաւ մը կշտացուց, և դուն կը կարծես թէ գայլին հայհոյելով բան մը ըրած կըլլաս, ահա այդ տեղն է ամենամեծ սրխալդ, զոր ցփախտաբար չկրցիր ուղղել և այդ խեղով մնացեալ զաւակներդ ալ գայլին կեր պիտի առս:

Ատենապետ.— Սնդոյն է ակն կէտը սա է թէ, ուրիշ է խօսելն և ուրիշ է գործելն. վա՛յ այն ազգին կամ ժողովրդին, որ միայն խօսքով կը բաւականանայ մինչև գերեզման, ուրկէ անդին արդէն խօսիլն արգիւտած է: Արդ ներուր ինձ ըսել թէ, դուք ալ բազմաշարժար ընկերութիւններ, դուք ալ գրեթէ մեծ մասամբ ձեր ժամանակը ոչինչ խօսքերով անցնելով, յետ բազմադիմի զոհերու ձեր սիրեցեալ հայրենակիցները վերջապէս գայլ Օրմանեանի յանձնեցիք: Դուք դեռ կանակնիդ հողին տուած կտնացի նախախնայներ կը տեղաք Օրմանեանի անշնչացեալ դիակին վրայ «չյիշուի» ըսելով մի պօռաք. նա՛րարոյապէս մեռած է, չի լսեո. լուեցէք և միայն մտքերնիդ պահեցէք սա խօսքը թէ—«վա՛յ այն ազգին կամ ժողովրդին, որ միայն խօսքով կ'ապրի»:

Ատենանք գոցուած է, երթայք բարեաւ և Տէր եղիցի ընդ ձեզ, ամէն:

Սգաւոր Ֆարհատ

Փոխթիկ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

... խմբագիր

«Միութիւն»ի վերջի թւոյն մէջ կարդայինք որ յառաջիկայ Մայիս ամսուն Բարիզի մէջ հայկ կոն խառն ժողով մը գումարելու առաջարկը պիտի լինի: Արդարեւ այդպիսի ժողովի մը պէտքը դաւի կը թուի ինձ և նոյն իսկ շատերուն, սակայն եթէ տարակուսելի կէտ մը կայ, այն է որ մի գուցէ մեր գործիչներէն ոմանք նախանձէ թելադրեալ չգիշանին Տիար Չերազի և իր ընկերներու հավանւոյն տակ մանել ու վիճաբանիլ: Երեսկը եթէ այդ զստզութիւնը յանձն առնել ուզեն, ժողովն հետեւանք խիստ արդիւնաբեր ու նպաստաւոր պիտի լինի մեր սուրբ դատին: Ձի մոռնանք ը ել որ ժողովի անդամները Տիար Չերազի պէս հանրաձանօթ անձինք ըլլալու են և չեղոր. զոր օրինակ Սարախանեան վարդապետ և կամ ասոր նման մէկը:

Ազգագուտ ժողովին իրականացման ի սրտէ փափաքող: Բարիկ

ՎՐԷԺ

Բնիկ Պոլսեցի Միհրան Կալանօղեան, որ վերջին տըխուր դէպքերէն ընտանեօք և զաւակներով Եգիպտոս ապաստանած էր, դործոց անյաջողութիւնը հարկադրած էր զինքը տեղս փոխապրուիլ, ուր վերջերս հիւանդանալով խակ բժշկի տգիտութեան զոհ գնաց:

Միհրան Կալանօղեան հայրենասէր անձնաւորութիւն մէր, որ ժամանակին մեծապէս նպաստած է Հայ Յեղ. Ս. դատին: Այժմ խեղճ ընտանիքն օւ զաւակները վերջին ծայր թուառութեան մատնուած կարեկյութեան և ողորմութեան կը կարօտին:

Յ. Գ.

Ճիպուկ

Կ Ը Փ Ն Տ Ո Ր Ի

Սամաթիայի ՆԵՐՍԷՍ ՄԻՍԱԿԵԱՆ, եղբայր Արտաշէս Միսակեանի: Միջազատակ, սե աչքերով ու յոնքերով, 21 տարեկան, քիչ գիրուկ երիտասարդ մէ, որ Պանքի ցոյցէն ի վեր անյայտ եղած է:

Կը խնդրենք ամեն ազգայիններէն որ հետամուտ ըլլան սոյն երիտասարդի հետքերը գտնել և խմբագրութեանս տեղեկացնել:

Մեր նոր գրաչարը ամսոյս վերջերը կը սպասուի, հետեւաբար «Միութիւն»ի յաջորդ թիւը Փետրուարի սկիզբէն սկսեալ կանոնաւորապէս պիտի շարունակուի: